

1866 ին Աւատրիոյ գէմ տրուելիք պատերազմին խորհուրդը ու միջոցները մը տածեց . և ինքը դարձեալ իրեն հետևակախսումը զօրաց սպարապետ՝ Սատովայի պատերազմէն ետքը՝ իր յաղթական բանակին առաջնորդ կենալով արագութեամբ կը վազէր Օլմիւցի ու Վենենայի վրայ, ու օգոստոսի 2ին զինադադարման ու խաղաղութեան նախագիծ պայմաններուն ստորագրեց : Բայց շատ անդամ ալ սենեկէն զուրս չելլելով, զօրաց շարժմունքը ու պատերազմները կ'ուղղէր, ու կը յաղթանակէր : 1866 ին պատերազմաց յաջողութեան փոխարէն՝ Սեաւ Արծւոյ կարգը և ճոխ ունիկ մը տրուեցաւ իրեն : Իրեն դարձեալ յանձնուեցաւ Հիւսիսային գերմանիոյ

գաշնակցութեանց զինուորական ուժոյն միութեան գործը : Թէպէտ և խորհրդարանի անդամ է Մոլթքէ, բայց միայն ան ատենը մասնակից է՝ երբ զինուորական խնդիրներ յուզուին :

Խտալիոյ պատերազմին վրայ գրածէն զատ՝ ուրիշ քանի մը զինուորական գրուածներ ալ ունի . ինչպէս Արշաբանք Տաճիկ-ռուսիական ՚ի Տաճկաստան Երրոպիոյ, թուղոր զվիճակէ Տաճկաստանի յամն 1835-39, և այն։ Հմուտ է Մոլթքէ, և այլսայլ լեզուաց կատարեալ տեղեկութիւն ունեցող . բայց որովհետեւ բնութեամբ լուրջ է և լուսթիւն սիրող, առած եղած է ըսելթէ եօթը լեզու լոել զիտէ :


ԱՆ ՀԵԾԵԼԻ ՈՐ ԶԻՔ

Օրերուս աշխարհագոյժ և բազմադէտ գիպուածոց մէջ մարդկային ընկերութենէ անդին ալ ցաւագին և սրտաշարժ բաներ հանդիպած են . որոց մէկն ալ կ'ըսուի թէ Սետանայ պատերազմին երկրորդ օրն եղաւ . երբ զինուորական փողն կը հնչէ՝ 602 ձիք առանց ձիաւորի, կէս ողջանդամկէս խեղանդամ, ումանց վրայ դեռ համետքն և կազմաձքն մնացած՝ կը փութան կ'երթան իրենց առաջուց սահմանեալ փռանկաց բանակին կարգը կը շարուին . բայց ձիաւորքն չեն երեիր : Ումանք Բրուսիացւոց բանակին մէջ հանդիպած է կ'ըսեն այս բանս : Առջինը ստոյգ սեպեր լով Ամերիկացի տիկին մը՝ Պարդլեդ անուն՝ հետևեալ տողերը գրեր է :

Ծագէ առաւօտ ի սարս Սետանայ .

Եւ արեդական ճառագայթք ոսկի՝
Տարածին ժայռից ւ անտառաց վերայ,
Ի վերայ բերդին ամրապարըսպի,
Ի վերայ հովտի գետոյն Մողելայ,
Եւ ճամբարապատ՝ գետնին այն վերայ՝
Ուր ցըրուած գունդերն գան մէկտեղին
Լըսելով զհընչում սուր գալարփողին :
Բայց արեւն երեկ վերէն նայեցաւ
Մըթին սեւագին ահեղ նայուածով,

Հօն՝ ուր թշնամի թշնամնոյ դիպաւ,
Անողոքելի անգուխ հարուածով.
Եւ սեպտեմբերի պայծառ առւըտուն՝
Տրոփելով իրենց ցուցուած տեղերուն
Անհեծեալ ձիք վեց հարիւր վաղէին,
Լըսելով գնընչումըն գալարփողին։
Դադէ առաւօտն ի կըռուատեղին.
Կապոյտ եւ հանդարտ երկընքին ներքեւ՝
Մահու քընով պաղ խաղաղ եւ լըսին
Վեց հարիւր հեծեակք քունեն անարեւ։
Զայն փողոյն՝ այլ չի դրդեր հոդինին՝
Կըռուի կըակի դէմ գալ այնուհետեւ.
Ոչ այլ ձայն՝ բայց լուկ հրեշտակի փողոյն
Կըրնայ նորէն կեանք տալ հօն ընկելոյն։
Կոտրած դասակարգք զրահաղեստ զընդին¹,
Այն պատերազմիկքն եռանգուն կտրիճ,
Զինակոչ ձայնով գան եւ հաւաքին.
Հոչակուի համբաւըն սըրտակտրիչ։
Մինչ սեպտեմբերի պայծառ առւըտուն՝
Տրոփելով իրենց ցուցուած տեղերուն
Անհեծելոր ձիք վեց հարիւր վաղեն,
Երբ գալարփողոյն հնչումը լըսեն։



ՀԱՅԻ ՊԱՏՄՈՒԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ Ա.Ի.Ա.ԶԻՆ

ՄԱՐԴ.

ՆԱՄԱԿ ԳՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԴԵՐՈՐԴ

(Տես Երես 188.)

Այսօր ուրիշ մէկ անձի մը հետ ծանօթանանք պիտի, որ վրան մտածելու արժանի է։ Այդ անձը թթուածնի ու բնածխի ծնունդ մըն է, այլ ոչ մի և նոյն օրինակաւ, ինչպէս դու հօրդ ու մօրդ

¹ Cuirassiers.

աղջիկն ես։ Ինչ որ կը պատահի այդ աշխարհին մէջ մի և նոյն չէ անոր հետ որ 'ի մեզ կը հանդիպի։ Թթուածինը և բնածուխը անանկ մէկմէկու հետ կը խառնուին ու կը միանան, որ մէկ ամբողջ մը կը ձեացնեն, մէկ անձ մը, որ իրենց ծնունդը կ'ըսուի։

Երկուքն ալ մէկմէկու հետ միանալով անյայտ կ'ըլլան, և այն նոր անձն որ իրենց միութենէն առաջ կու գայ, ածխային բրու կը զուրցուի։

Թէ ինչպէս կ'ըլլայ այդ բանը քեզի չեմ կրնար զուրցել։ Կազ մըն է, կամ թէ լաւադոյն կ'ախորժիս, ոդ մըն է։ Վասն զի երբ կազ կ'ըսենք, անգղիարէն խօսք մըն է որ կ'արտաբերենք, և կը նշանակէ օդ։ Այդ բառն 'ի պատիւ երեսաց Բրիսդլէյ անդղիացւոյն ընդունեցանք, որ առաջինն եղաւ այլեւայլ